ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՄԱՐՏ 2005)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
«ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի
«Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է
մակրոտնտեսական, հարկաբյուջետային, դրամավարկային,
ինչպես նաև ՀՀ վճարահաշվարկային, բանկային համակարգի
հիմնական ցուցանիշների և տնտեսական նորմատիվների
վերաբերյալ տեղեկատվություն:
Մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ
տեղեկատվության աղբյուրը
ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է,
իսկ հարկաբյուջետային, դրամավարկային և բանկային
վիճակագրության տվյալների աղբյուրը՝
ՀՀ կենտրոնական բանկը:
Դրամավարկային և բանկային վիճակագրությունում ընդգրկված է
ՀՀ միջազգային պահուստների, փողի ագրեգատների,
ֆինանսական շուկայի և փոխարժեքների վերաբերյալ
տեղեկատվություն:

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումներ
տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է.

http:// www.CBA.am

Տնտեսական աճ

2005 թ. հունվար-մարտին տնտեսական աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 7.8%: ՀՆԱ-ի աճը հիմնականում պայմանավորվել է ծառայությունների (ազդեցությունը ՀՆԱ-ի աճի վրա կազմել է 3.0 տոկոսային կետ), զուտ անուղղակի հարկերի (2.6) և շինարարության (1.1) աճով:

ՀՆԱ-ի դեֆլյատորը 2005 թ. հունվար-մարտին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 106.2%:

Գնաճ

Համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2005 թ. մարտին գրանցվել է սպառողական գների ընդհանուր մակարդակի 0.9%-ով անկում՝ հիմնականում պայմանավորված պարենային ապրանքների՝ «Բանջարեղեն» (-7.8%), «Միրգ» (-2.4%) և «Միս և մսամթերք» (-1.0%) ապրանքախմբերի գների անկմամբ, որոնք ապահովել են գնանկման համապատասխանաբար 0.5, 0.1 և 0.1 տոկոսային կետերը:

2004 թ. դեկտեմբերի համեմատությամբ սպառողական գների աճը կազմել է 3.7%: 2005 թ. մարտին, 2004 թ. նույն ամսվա համեմատությամբ, սպառողական գների ինդեքսը կազմել է 103.5%, իսկ 2005 թ. հունվար-մարտին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ՝ 104.4%:

Բնականոն գնաճը մարտին, նախորդ ամսվա համեմատությամբ, կազմել է -0.26%, նախորդ տարվա դեկտեմբերի համեմատությամբ՝ 0.14%, 2005 թ. հունվար-մարտին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ բնականոն գնաճը կազմել է 0.87%, իսկ նախորդ տարվա նույն ամսվա համեմատությամբ՝ 0.71%:

Արտաքին հատված

2005 թ. հունվար-մարտին ապրանքների արտահանումը (ՖՕԲ գներով) կազմել է 195.0 մլն ԱՄՆ դոլար, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելանալով 28.4%-ով՝ հիմնականում ի հաշիվ արտահանման մեջ 34.1% կազմող «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և 39.7% կազմող «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի արտահանման ծավալների համապատասխանաբար 183.1% և 24.1% աճի: Արտահանումն առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալները հաշվի առնելու աճել է 31.4 %-ով:

Ներմուծումը (ՍԻՖ գներով) կազմել է 371.5 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճելով 27.9 %-ով: Ներմուծման աճը հիմնականում պայմանավորված է ներմուծման մեջ 26.7% կազմող «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի ներմուծման ծավալների 49.8% աճով: Առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի ներմուծման ծավալները հաշվի առնելու՝ ներմուծումն աճել է 21.5%-ով: Հունվար-մարտին աճել են նաև ներմուծման մեջ 10.4% կազմող «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» և 7.3% կազմող «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբերի ներմուծման ծավալները՝ համապատասխանաբար 53.9% և 61.3%-ով:

Արդյունքում, 2005 թ. հունվար-մարտին առևտրային հաշվեկշռի պակասուրդը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, ավելացել է 27.5%-ով (առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի՝ 14.9%-ով) և կազմել 176.5 մլն ԱՄՆ դոլար:

2005 թ. հունվար-մարտին ՀՀ դրամի անվանական միջին հաշվարկային փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմել է 477.0 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ արժևորվելով 15.6%-ով: Մարտին ԱՄՆ դոլարի միջին փո-

խարժեքը կազմել է 466.0 դրամ՝ նախորդ ամսվա համեմատությամբ արժևորվելով շուրջ 1.6%-ով: 2005 թ. հունվար-մարտին ՀՀ դրամի անվանական միջին հաշվարկային փոխարժեքը եվրոյի նկատմամբ կազմել է 625.5 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ արժևորվելով 11.5 %-ով: Մարտին եվրոյի միջին փոխարժեքը կազմել է 614.6 դրամ՝ նախորդ ամսվա համեմատությամբ արժևորվելով 0.2%-ով:

Պետական հատված

Մարտին, ինչպես և առաջին եռամսյակի նախորդ ամիսներին պետական բյուջեի եկամուտները գերազանցել են ծրագրված մակարդակները: Այսպես, եկամուտներն ու դրամաշնորհները կազմել են 25 մլրդ դրամ՝ ծրագրված 23.2 մլրդ դրամի փոխարեն, որտեղ հարկային եկամուտները կազմել են 21 մլրդ դրամ՝ ծրագրված 19.7 մլրդ դրամի փոխարեն, իսկ ոչ հարկային և կապիտալ եկամուտները ծրագրվածի համեմատությամբ գերակատարվել են մոտ 0.5 մլրդ դրամով և կազմել 1.0 մլրդ դրամ: Դրամաշնորհները ծրագրվածի համապատասխան կազմել են 2.9 մլրդ դրամ: Ամսվա հարկային եկամուտների միջին օրական մուտքերը կազմել են մոտ 1.0 մլրդ դրամ՝ փետրվարի 1.1 մլրդ դրամի և նախորդ տարվա մարտի 0.8 մլրդ դրամի փոխարեն:

Մարտին հարկերի հավաքագրման գործընթացը, ի տարբերություն նախորդ ամիսների, ունեցել է համաչափ բնույթ: Ամսվա վերջին երեք օրը հավաքագրված հարկերը կազմել են ամսվա հարկերի 14.2%-ը՝ հունվարի 23.8%-ի և փետրվարի 21.3%-ի փոխարեն:

Բյուջեի ծախսերը մարտին կազմել են 27.6 մլրդ դրամ՝ ծրագրով նախատեսված 29 մլրդ դրամի փոխարեն: Արդյունքում պակասուրդը կազմել է 2.6 մլրդ դրամ, որը ձևավորվել է արժեթղթերի տեղաբաշխումից ստացված 4.1 մլրդ դրամ զուտ մուտքերի, 1.2 մլրդ դրամ արտաքին վարկի մարման և 0.3 մլրդ դրամ ՀՀ ԿԲ-ում Կառավարության միջոցների ավելացման հաշվին: Ընդ որում, ամսվա ընթացքում ՀՀ կառավարության ավանդներից մարվել է մոտ 1.5 մլրդ դրամ, իսկ միասնական հաշվում պետբյուջեի միջոցներն ավելացել են 1.8 մլրդ դրամով:

Դրամավարկային քաղաքականություն

Ըստ դրամավարկային քաղաքականության ծրագրի մարտ ամսվա սցենարի՝ փողի բազան ամսվա ընթացքում պետք է կառավարվեր 118.2 մլրդ դրամ միջին ցուցանիշի շրջանակում, ինչը ենթադրում էր շուրջ 1.4 մլրդ դրամի աճ: Սինչդեռ, փաստացի արդյունքներով փողի բազան, նախորդ ամսվա համեմատությամբ, ավելացել է 6.8 մլրդ դրամով և մարտի վերջին կազմել 123.6 մլրդ դրամ՝ գերազանցելով տատանումների թույլատրելի միջակայքի վերին սահմանն ավելի քան 3.0 մլրդ դրամով: Շեղումը հիմնականում պայմանավորվել է հունվար-փետրվարին նախատեսված բյուջետային կանխիկ ծախսերի մի մասը Կառավարության կողմից մարտին իրականացնելու և ԿԲ կողմից արտարժույթի գնման հետևանքով ԿԲ-ից դուրս կանխիկի զգալի աճով, ինչն էլ հանգեցրել է այդ ցուցանիշի՝ առաջին եռամսյակի վերջին ակնկալվող մակարդակի ավելի քան 3.5 մլրդ դրամով գերազանցման:

ՀՀ կենտրոնական բանկի ՁԱԱ-ն համալրվել են 6.2 մլրդ դրամով՝ պայմանավորված Կենտրոնական բանկի կողմից ավելի քան 3.5 մլրդ դրամին համարժեք արտարժույթի առքով, Կառավարության կողմից ստացված 2.2 մլրդ դրամին համարժեք գումարով դրամաշնորհի փոխարկմամբ և 1.7 մլրդ դրամին համարժեք այլ արտարժութային մուտքերով: Միաժամանակ, ՁԱԱ-ն նվազել են 1.2 մլրդ դրամով՝ Կառավարության կողմից արտաքին պարտքի սպասարկման հաշվին:

ՀՀ կենտրոնական բանկի ՁՆԱ-ն աճել են 532 մլն դրամով, որի կառուցվածքում 1.3 մլրդ դրամով ավելացել են զուտ այլ ակտիվները՝ պայմանավորված կուտակային հաշվից բացված նոր բանկի հաշվին կապիտալի համալրման գումարը փոխանցելու հանգամանքով:

ՁՆԱ-ի կառուցվածքային մյուս երկու տարրերի՝ Կենտրոնական բանկի հանդեպ Կառավարության զուտ պարտավորությունների և բանկերի պարտավորությունների ցուցանիշները նվազել են համապատասխանաբար 752 մլն և 36 մլն դրամով: Կենտրոնական բանկի հանդեպ Կառավարության պարտավորությունները նվազել են Գանձապետարանի միասնական հաշվի մնացորդի՝ 2.1 մլրդ դրամով ավելացման, Կենտրոնա-

կան բանկի պորտֆելից 123 մլն դրամի պետարժեթղթերի մարման և Կենտրոնական բանկում Կառավարության ժամկետային ավանդներից 1.5 մլրդ դրամի մարման արդյունքում:

Բանկերի պարտավորությունների ցուցանիշը գրեթե անփոփոխ է, քանի որ ներգրավված ավանդների 2.5 մլրդ դրամի զուտ մարումը չեզոքացվել է Կենտրոնական բանկի կողմից նույն ծավալի հակադարձ ռեպո գործառնության իրականացմամբ: Չնայած 1.0 մլրդ դրամով նվազմանը՝ բանկային իրացվելիության ավելցուկի՝ տարեսկզբից ձևավորված և պահպանված բավականին բարձր մակարդակի պայմաններում (7.6 մլրդ դրամ) բանկերը դարձյալ դիմել են Կենտրոնական բանկում ավանդադրման մշտական հնարավորության գործիքին, ինչի արդյունքում համախառն ծավալն ամսվա ընթացքում կազմել է 24.0 մլրդ դրամ: Որպես դրամային իրացվելիության ավելցուկի կրճատման ակտիվ գործիք շարունակում է մնալ Կառավարության կողմից լրացուցիչ թողարկված պարտատոմսերից ստացված միջոցները Կենտրոնական բանկում ավանդադնելու մեխանիզմը, որի ծավալը կազմել է 1.6 մլրդ դրամ:

Հունվարի կտրուկ անկումից հետո փետրվար-մարտին, ինչպես վերը նշվել է, դիտվել է կանխիկի հանդեպ պահանջարկի զգալի աճ՝ 7.6 մլրդ դրամ, որից 6.2 մլրդ դրամը տեղի է ունեցել մարտին՝ պայմանավորելով փողի առաջարկի ամսական գրեթե ողջ ընդլայնումը: ԿԲ-ում առևտրային բանկերի և այլ կազմակերպությունների միջոցներն ամսվա ընթացքում ավելացել են 570.0 մլն դրամով:

Փողի զանգվածը (առանց կուտակված տոկոսների) մարտին ավելացել է 10.4 մլրդ դրամով և ամսվա վերջին կազմել 277.9 մլրդ դրամ: Ինչպես և փետրվարին, մարտին ևս փողի պահանջարկի աճը հիմնականում դրսևորվել է փողի զանգվածի դրամային տարրերի և հատկապես շրջանառությունում գտնվող կանխիկի աճով: Այսպես, կանխիկը նախորդ ամսվա համեմատությամբ ավելացել է 6.4 մլրդ դրամով և ամսվա վերջին կազմել 91.4 մլրդ դրամ: Դրամային ավանդներն աճել են 3.8 մլրդ դրամով, որից 1.1 մլրդ դրամը բաժին է ընկել ցպահանջ, իսկ 2.7 մլրդ դրամը՝ ժամկետային ավանդներին: Արդյունքում, դրամային զանգվածն ամսվա ընթացքում աճել է 10.2 մլրդ դրամով՝ կազմելով 145.2 մլրդ դրամ: Արտարժութային ավանդների՝ տարեսկզբից նվազող վարքագիծը դանդաղ տեմպերով մարտին փոխվել է աճի, ինչն արտահայտվել է ցպահանջ ավանդների 3.2 մլրդ դրամով ավելացմամբ: Այդ աճը 3.0 մլրդ դրամով չեզոքացվել է ժամկետային ավանդների նվազմամբ, ինչի հետևանքով արտարժութային ավանդներն ավելացել են ընդամենը 150 մլրդ դրամով և ամսվա վերջին կազմել 133.3 մլրդ դրամ:

Մարտին, ժամանակաշրջանի վերջի դրությամբ փողի և դրամային բազմարկիչների մակարդակները կազմել են համապատասխանաբար 2.25 և 1.17, փոքր-ինչ նվազել նախորդ ամսվա վերջի մակարդակներից՝ կրելով հիմնականում կանխիկի աճի գործոնի ազդեցությունը:

ՊՊ առաջնային շուկայում դիտվել է տոկոսադրույքների որոշակի անկում, մասնավորապես՝ մինչև 1 տարի ժամկետայնությամբ կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը նախորդ ամսվա համեմատ նվազել է է 0.47 տոկոսային կետով՝ կազմելով 3.77%: Միջինժամկետ մասնակի մարումներով պարտատոմսերի եկամտաբերությունն աճել է ընդամենը 0.06 տոկոսային կետով՝ կազմելով 4.61%: Տեղաբաշխվել են նաև երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսեր՝ 8 տարի շրջանառության ժամկետով, 6.93% եկամտաբերությամբ:

Արժութային շուկայում առքի և վաճառքի ծավալները համապատասխանաբար կազմել են 104.97 մլն և 97.88 մլն ԱՄՆ դոլար, իսկ միջին կշռված փոխարժեքը՝ 464.12 դրամ, որը նախորդ ամսվա միջին փոխարժեքի համեմատ արժևորվել է 1.76%-ով:

Մարտին ՀՀ ԿԲ-ն հանդես է եկել դրամային գործառնությունների իրականացման հայտարարությամբ (մասնավորապես՝ հակադարձ ռեպո գործառնություններ): Կենտրոնական բանկը կնքել է 2,536 մլն դրամի հակադարձ ռեպո գործարք՝ սահմանված 3.75% եկամտաբերությամբ, ինչպես նաև ներգրավել է 23,910 մլն դրամի ավանդ՝ սահմանված 1.75% եկամտաբերությամբ:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից մարտին դրամավարկային քաղաքականության գործիքների՝ մասնավորապես ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքները իջեցվել են 0.75%-ով՝ սահմանվելով 3.75%, իսկ լոմբարդային վարկերի և բանկերից ներգրավված ավանդների տոկոսադրույքները մնացել են անփոփոխ՝ համապատասխանաբար 16% և 1.75%:

Մարտին բանկային տոկոսի հաշվարկային դրույքը սահմանվել է 16%:

I. Իրական հատված

Անվանում	*2005թ. հունվար - փետրվար*	*2005 թ. հունվար -փետրվարի իրական աճի ինդեքսը 2004 թ. հունվար - փետրվարի նկատմամբ (%)*	*2005 թ. հունվար – մարտ*	*2005 թ. հունվար - մարտի իրական աճի ինդեքսը 2004 թ. հունվար - մարտի նկատմամբ (%)*
Համախառն ներքին արդյունք *(մլն ՀՀ դրամ)*	155336.5	107.0	248118.5	107.8
ՀՆԱ դեֆլյատոր *(%. աճողական)*	-	106.8	-	106.2
Մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ *(հազար ՀՀ դրամ. աճողական)* [1]	142.9	109.1	228.2	109.2
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	91808.1	105.5	144065.6	105.1
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	1274.7	105.8	1847.6	106.0
Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն ՀՀ դրամ)*	23267.9	100.9	37888.6	101.1
Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	100356.4	105.5	158433.3	103.5
Կապիտալ շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	9682.0	122.2	20752.1	122.3
Բնակչության դրամական եկամուտները *(մլն ՀՀ դրամ)*	163077.3	106.9 [1]	263564.3	106.8[1]
Բնակչության դրամական ծախսերը *(մլն ՀՀ դրամ)*	175975.6	106.1 [1]	270270.6	104.0[1]
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	46211	118.2[1]	47564[2]	118.5[1]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1194.3	-	1194.0	-
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	107.1	-	106.8	-
Գործազրկության մակարդակը *(%)*	9.0	-	8.9	-

II. Արտաքին հատված

Անվանում	*2005 թ. հունվար – փետրվար* *(մլն ԱՄՆ դոլար)*	*2005 թ. հունվար – փետրվարը 2004 թ. հունվար – փետրվարի նկատմամբ (%)*	*2005 թ. հունվար – մարտ* *(մլն ԱՄՆ դոլար)*	*2005 թ. հունվար – մարտը 2004 թ. հունվար – մարտի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	108.8	128.4	195.0	128.4
Ներմուծում *(ՍԻՖ)*	237.8	136.9	371.5	127.9
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	129.0	145.0	176.5	127.5

III. Գների ինդեքսներ

Ժամանակաշրջան	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	105.4	100.5	100.7	98.2
Փետրվար	99.3	94.8	99.9	98.4
Մարտ	99.1	101.2	122.9	99.6
2005 թ. հունվար – մարտը 2004 թ. հունվար – մարտի համեմատությամբ	104.4	107.9	107.9	107.3

** Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների:*

IV. Գնաճ

ժամանակաշրջան	*2003*	*2004*	*2005*	*2005*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*
Հունվար	4.1	2.5	5.4	5.4
Փետրվար	-1.5	-0.6	-0.7	4.7
Մարտ	-0.5	0.3	-0.9	3.7
Ապրիլ	2.0	1.2		
Մայիս	1.2	1.1		
Հունիս	1.4	-0.1		
Հուլիս	-5.5	-2.5		
Օգոստոս	-2.3	-2.4		
Սեպտեմբեր	2.5	-0.7		
Հոկտեմբեր	-0.1	0.1		
Նոյեմբեր	2.2	0.8		
Դեկտեմբեր	5.2	2.3		
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	8.6	2.0		
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	4.7	7.0		

V. Բնակառնոն գնաճի փոփոխությունները [1]

Ցուցանիշ	2003	2004	2005
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.69	0.65	0.71
Փետրվար	-0.46	0.05	-0.37
Մարտ	0.00	0.03	-0.26
Ապրիլ	0.23	0.05	
Մայիս	0.06	0.04	
Հունիս	0.61	-0.13	
Հուլիս	-0.55	-0.50	
Օգոստոս	-0.18	-0.31	
Սեպտեմբեր	1.20	-0.30	
Հոկտեմբեր	0.04	-0.16	
Նոյեմբեր	0.94	-0.05	
Դեկտեմբեր	2.07	0.30	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	1.16	4.45	0.72
Փետրվար	0.86	5.60	1.07
Մարտ	1.04	6.37	0.71
Ապրիլ	0.37	6.39	
Մայիս	0.49	6.23	
Հունիս	2.44	5.41	
Հուլիս	2.26	6.71	
Օգոստոս	2.61	6.90	
Սեպտեմբեր	5.33	6.02	
Հոկտեմբեր	4.65	5.67	
Նոյեմբեր	4.23	4.39	
Դեկտեմբեր	4.67	0.55	

VI. Բնակառնոն գնաճին առավելապես նպաստող 10 ապրանքատեսակները [1]

Անվանում	*Նպաստումը բնակառնոն գնաճին, տոկոսային կետ*
նախորդ ամսվա նկատմամբ	
Բնակառնոն գնաճ. *այդ թվում*	**-0.26**
տավարի միս	0.05
ծու	0.04
խոզի միս	0.02
հավի բուդ	0.02
թռչնի միս	0.01
հաց I տեսակի	0.01
այլ յուղեր (հալած յուղ)	0.01
կարագ	0.01
բուսական յուղ (արևածաղկի)	0.01
աղացած միս	0.01


[1] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների:
[2] Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական տվյալների:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ [1]

(մլն ՀՀ դրամ)

Ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության նկատմամբ			Կառավարության ավանդներ					Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ[2]	Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ[3]
	պետական կարճաժամկետ պարտատոմսեր	պետական արժե-կտրոնային պարտատոմսեր	ընդամենը	կենտրոն. կառավ. հաշիվներ և ավանդներ դրամով	կենտրոն. կառավ. հաշիվներ արտարժ.	ՕՀԳ-երի միջոցներ դրամով	ՕՀԳ-երի միջոցներ արտարժույթով	ընդամենը		
2004										
Դեկտեմբեր [4]	193	5711	5904	42512	126	0	97	42735	**-36830**	***-36815***
2005										
Հունվար	193	5658	5852	63919	124	0	97	64141	**-58289**	***-58268***
Փետրվար	193	5598	5792	64629	122	0	98	64849	**-59057**	***-59162***
Մարտ	193	5526	5719	65220	119	90	99	65528	**-59809**	***-60054***


[1] *Ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:*
[2] *Կառավարության նկատմամբ պահանջների և Կառավարության ավանդների տարբերությունը:*
[3] *Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:*
[4] *Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները:*



ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ[1, 2]

(մլն ՀՀ դրամ)

ժամկետ	Առևտրային բանկերի պարտավորությունները Կառավարության նկատմամբ[3]	ԿԲ պարտավորությունները Կառավարության նկատմամբ	Ընդամենը
2004			
Դեկտեմբեր	12221	42735	54956
2005			
Հունվար	15029	64141	79170
Փետրվար	17396	64849	82245
Մարտ	15408	65528	80936



[1] Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ: Ներկայացված տվյալները հաշիվների մնացորդներն են ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

[2] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:

[3] Ընդգրկված են առևտրային բանկերի ցպահանջ և ժամկետային պարտավորությունները Գանձապետարանի, ինչպես նաև ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի և տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ:

ՓՈՂԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 04 [4]	Հ – 05	Փ – 05	Մ – 05 [4]
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)				
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1,2]	***149266***	***160018***	***165260***	***171489***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-17216***	***-42573***	***-48403***	***-47871***
Կառավարություն	-36830	-58289	-59057	-59809
Բանկեր	10857	9653	5100	5064
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	1157	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի ներգրավման սվոփ	0	0	0	0
Ավանդներ (-)	-2000	-700	-6600	-4100
Հակադարձ ռեպո (-)	0	-1347	0	-2536
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի տրամադրման սվոփ (-)	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	8757	6063	5554	6874
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***129830***	***117152***	***119542***	***123374***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***132050***	***117444***	***116857***	***123618***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	105534	91268	92635	98827
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	25800	25604	23700	23834
Այլ հաշիվներ	716	572	521	957
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	561	529	507	588
Այլ հաշիվներ (արտարժույթով)	155	43	14	369
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)				
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***10752***	***5242***	***6229***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***-25357***	***-5829***	***532***
Կառավարություն	-	-21459	-768	-752
Բանկեր	-	-1204	-4553	-36
այդ թվում՝ ավանդներ (-)	-	-1300	5900	-2500
Զուտ այլ ակտիվներ	-	-2694	-508	1320
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	**-**	***-12679***	***2390***	***3832***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	**-**	***-14606***	***-587***	***6761***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-14265	1367	6192
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	-	-196	-1904	134
Այլ հաշիվներ	-	-144	-51	436
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	-	-33	-21	81
Այլ հաշիվներ (արտարժույթով)	-	-112	-29	355
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)				
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***7.2***	***3.3***	***3.8***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***-147.3***	***-13.7***	***1.1***
Կառավարություն	-	-58.3	-1.3	-1.3
Բանկեր	-	-11.1	-47.2	-0.7
Զուտ այլ ակտիվներ	-	-30.8	-8.4	23.8
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	**-**	***-9.8***	***2.0***	***3.2***
ՓՈՂԻ ԲԱԶԱ [4]	**-**	***-11.1***	***-0.5***	***5.8***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-13.5	1.5	6.7
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	-	-0.8	-7.4	0.6
Այլ հաշիվներ	-	-20.2	-8.8	83.6

[1] Առանց սեփականաշնորհման միջոցների: ԶԱԱ-ն ընդգրկում են փոխարկելի արտարժույթով ակտիվները:
[2] ԶԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 485.84 դրամ, 1 ՀՓԻ = 1.5530 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.3608 ԱՄՆ դոլար, 1 ՄԲ ֆունտ ստեռլինգ = 1.9258 ԱՄՆ դոլար:
[3] Փողի բազան հաշվարկված է որպես տվյալ ամսվա վերջին օրվան նախորդող հինգ օրերի և հաջորդ ամսվա սկզբի հինգ օրերի միջինը:
[4] Ներառված են եզրափակիչ շրջանառության արդյունքները:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵԿՇԻՌ [1]

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 04	Հ – 05	Փ – 05	Մ –05
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**55829**	**56969**	**53242**	**50846**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	117646	117724	113184	107917
Արտաքին պարտ. փոխարկելի արտարժույթով	-57154	-56395	-56223	-53699
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով	-4663	-4360	-3719	-3373
ԶՆԱ	**130829**	**130156**	**129619**	**135579**
Կառավարություն	19598	20248	18730	24151
Զուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	20989	24849	25598	25777
Պահուստային ակտիվներ	34083	36625	37449	37707
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ	-13094	-11776	-11851	-11930
Տնտեսություն	142426	136997	136586	141043
Ջեռնարկություններ	80113	75460	72354	73767
Դրամով	27361	24391	24240	24542
Արտարժույթով	49224	47601	48094	49206
Արժեթղթեր	3529	3468	20	20
Տնային տնտեսություններ	56001	55202	57624	60323
Դրամով	14325	13445	13999	15426
Արտարժույթով	41676	41757	43625	44897
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	42	46	31	29
Դրամով	25	25	22	19
Արտարժույթով	17	21	10	10
Այլ ֆինանսական կազմակերպություններ	6269	6289	6576	6924
Դրամով	2042	1984	2522	3082
Արտարժույթով	4227	4305	4054	3843
Այլ ռեզիդենտներ[2]	0	0	1	0
Դրամով	0	0	0	0
Արտարժույթով	0	0	1	0
Զուտ այլ ակտիվներ	-52183	-51938	-51296	-55392
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	1836	1572	1604	1600
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժ.)	3052	2249	2279	1785
Արտաքին պարտ. (ոչ փոխարկելի արտարժ.)	-799	-656	-857	-796
Ներդրումներ փայաբաժիններում	445	445	445	457
Միջբանկային պահանջներ	6097	4139	3242	3721
Այլ ակտիվներ	32887	33359	36639	39005
Միջբանկային պարտավորություններ	-5530	-3617	-2793	-3265
Դրամական շուկայի գործիքներ	-3406	-3371	-3335	-3207
Կապիտալ հաշիվներ	-68842	-68635	-70214	-73661
Այլ պարտավորություններ	-17924	-17423	-18305	-21031
ԱՎԱՆԴՆԵՐ	**186659**	**187126**	**182861**	**186424**
Դրամով ավանդներ	46588	47838	49712	53477
Ցպահանջ ավանդներ	33283	32250	35629	36675
Ժամկետային ավանդներ	13304	15588	14083	16802
Ավանդներ արտարժույթով	140071	139288	133149	132947
Ցպահանջ ավանդներ	74453	71481	66296	69120
Ժամկետային ավանդներ	65618	67807	66853	63827

[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:

[2] Չդասակարգված պահանջներ: «Փողի զանգվածի կառուցվածքը» աղյուսակում սույն պահանջներն ընդգրկված են «Ջեռնարկություններ և կազմակերպություններ» տողում:

ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 04 [6]	Հ – 05	Փ – 05	Մ – 05 [6]
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)				
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [2]	***205095***	***216987***	***218502***	***222334***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***80848***	***52841***	***49899***	***56461***
Կառավարություն	-17232	-38041	-40327	-35659
Տնտեսություն	142469	137037	136622	141075
Չեռնարկ. և կազմակերպ.	80114	75460	72355	73767
որից՝ կուտակված տոկոսներ	651	637	565	667
Տնային տնտեսություններ	56044	55241	57659	60354
որից՝ կուտակված տոկոսներ	790	854	880	945
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	42	46	31	29
որից՝ կուտակված տոկոսներ	0	0	0	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ	6269	6289	6576	6924
որից՝ կուտակված տոկոսներ	48	36	36	42
Զուտ այլ ակտիվներ	-44388	-46154	-46395	-48955
ԴՐԱՄԱՅԻՆ ՁԱՆԳՎԱԾ [3]	***145538***	***130296***	***135012***	***145246***
ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾ *(առանց կուտակված տոկոսների)*	***285172***	***269000***	***267511***	***277883***
ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾ [4]	***285943***	***269828***	***268401***	***278796***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	98569	82131	85019	91415
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով [5]	33845	32778	36136	37263
կուտակված տոկոսներ	38	41	53	43
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	13304	15588	14083	16802
կուտակված տոկոսներ	142	160	173	191
Արտարժույթով ավանդներ	140226	139331	133163	133316
Ցպահանջ [5]	74607	71525	66310	69489
կուտակված տոկոսներ	52	55	65	51
Ժամկետային	65618	67807	66853	63827
կուտակված տոկոսներ	539	573	599	627
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)				
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***11892***	***1515***	***3832***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***-28007***	***-2942***	***6562***
Կառավարություն	-	-20809	-2286	4668
Տնտեսություն	-	-5432	-415	4453
Չեռնարկ. և կազմակերպ.	-	-4654	-3105	1413
որից՝ կուտակված տոկոսներ	-	-15	-72	102
Տնային տնտեսություններ	-	-802	2418	2695
որից՝ կուտակված տոկոսներ	-	64	25	65
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	-	4	-15	-3
որից՝ կուտակված տոկոսներ	-	0	0	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	20	287	348
որից՝ կուտակված տոկոսներ	-	-12	0	6
Զուտ այլ ակտիվներ	-	-1766	-241	-2560
ԴՐԱՄԱՅԻՆ ՁԱՆԳՎԱԾ	**-**	***-15242***	***4716***	***10234***
ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾ *(առանց կուտակված տոկոսների)*	**-**	***-16173***	***-1488***	***10372***
ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾ	**-**	***-16115***	***-1427***	***10395***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-16438	2889	6395
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	-	-1067	3358	1127
կուտակված տոկոսներ	-	3	12	-10
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	-	2284	-1505	2720
կուտակված տոկոսներ	-	18	13	18
Արտարժույթով ավանդներ	-	-894	-6168	153
Ցպահանջ	-	-3083	-5215	3179
կուտակված տոկոսներ	-	2	10	-13
Ժամկետային	-	2188	-953	-3027
կուտակված տոկոսներ	-	34	26	28

(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)				
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***5.8***	***0.7***	***1.8***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***-34.6***	***-5.6***	***13.2***
Կառավարություն	-	-120.8	-6.0	11.6
Տնտեսություն	-	-3.8	-0.3	3.3
Ֆեռնարկ. և կազմակերպ.	-	-5.8	-4.1	2.0
Տնային տնտեսություններ	-	-1.4	4.4	4.7
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	-	10.0	-32.1	-8.1
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	0.3	4.6	5.3
Զուտ այլ ակտիվներ	-	-4.0	-0.5	-5.5
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ	-	***-10.5***	***3.6***	***7.6***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտակված տոկոսների)*	-	***-5.7***	***-0.6***	***3.9***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ	-	***-5.6***	***-0.5***	***3.9***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-16.7	3.5	7.5
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	-	-3.2	10.2	3.1
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	-	17.2	-9.7	19.3
Արտարժույթով ավանդներ	-	-0.6	-4.4	0.1
Ցպահանջ	-	-4.1	-7.3	4.8
Ժամկետային	-	3.3	-1.4	-4.5

[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:

[2] ԶԱՄ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ԶԱՄ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 485.84 դրամ, 1 ՀՓԻ = 1.5530 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.3608 ԱՄՆ դոլար, 1 ՄԲ ֆունտ ստեռլինգ = 1.9258 ԱՄՆ դոլար, առևտրային բանկերի ԶԱՄ-ն փաստացի փոխարժեքներով:

[3] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ միայն դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները (առանց կուտակված տոկոսների):

[4] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները, արտարժութային ավանդները (ներառյալ կուտակված տոկոսները):

[5] Ընդգրկում են ռեզիդենտների հաշիվները և ցպահանջ ավանդները:

[6] Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները:

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1, 2]

(մլն ՀՀ դրամ)

ժամկետ	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	M1 [4]	Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	M2 [5]	Արտարժույթով ավանդներ	M2X [6]
2004							
Դեկտեմբեր	98569	33807	132376	13162	145538	139634	285172
2005							
Հունվար	82131	32738	114869	15428	130296	138703	269000
Փետրվար	85019	36083	121103	13910	135012	132499	267511
Մարտ	91415	37220	128635	16611	145246	132637	277883

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1, 3]

(մլն ՀՀ դրամ)

ժամկետ	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	M1 [4]	Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	M2 [5]	Արտարժույթով ավանդներ	M2X [6]
2004							
Դեկտեմբեր	98569	33845	132414	13304	145718	140226	285943
2005							
Հունվար	82131	32778	114909	15588	130497	139331	269828
Փետրվար	85019	36136	121156	14083	135238	133163	268401
Մարտ	91415	37263	128678	16802	145480	133316	278796

[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:


[2] Ավանդների մեջ կուտակված տոկոսները չեն ընդգրկված:


[3] Ավանդների մեջ կուտակված տոկոսները ընդգրկված են:


[4] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ դրամը և ցպահանջ ավանդները (ներառյալ հաշիվները):

[5] M2-ը դրամային զանգվածն է. ընդգրկում է M1-ը և դրամով ժամկետային ավանդները:


[6] M2X-ը փողի զանգվածն է. ընդգրկում է M2-ը և արտարժույթով ավանդները (ներառյալ հաշիվները):


Փողի բազան տատանումների թույլատրելի միջակայքում
մլն ՀՀ դրամ
137500
135000
132500
130000
127500
125000
122500
120000
117500
115000
112500
110000
04.01.05
06.01.05
08.01.05
10.01.05
12.01.05
14.01.05
16.01.05
18.01.05
20.01.05
22.01.05
24.01.05
26.01.05
28.01.05
30.01.05
01.02.05
03.02.05
05.02.05
07.02.05
09.02.05
11.02.05
13.02.05
15.02.05
17.02.05
19.02.05
21.02.05
23.02.05
25.02.05
27.02.05
01.03.05
03.03.05
05.03.05
07.03.05
09.03.05
11.03.05
13.03.05
15.03.05
17.03.05
19.03.05
21.03.05
23.03.05
25.03.05
27.03.05
29.03.05
31.03.05
Փողի բազա
Ծրագիր
Ծրագիր՝ +2%
Ծրագիր՝ -2%



Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն ՀՀ դրամ
135000
120000
105000
90000
75000
60000
45000
30000
02
03
04
05
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ
Պարտ. պահուստ. դրամով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն ՀՀ դրամ
300000
250000
200000
150000
100000
50000
0
02
03
04
05
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում




Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում



Փողի բազայի ամսական փոփոխությունը և ամսական գնաճը



Փողի զանգվածի ամսական փոփոխությունը և ամսական գնաճը




ՄԵՋՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1]

(մլն ՀՀ դրամ)


ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	M1	M2	M2X
2004					
Դեկտեմբեր	118742	87328	120859	135356	274203
2005					
Հունվար	116919	80711	112024	127674	264176
Փետրվար	120171	86956	124686	137967	272280
Մարտ	127999	93709	133916	149487	281344

[1] *Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով:*
Հարթեցման մեթոդիկան նկարագրված է «ՀՀ կենտրոնական բանկի բանբերի» 2001 թ. 2-րդ եռամսյակի համարում հրապարակված «ՀՀ փողի ագրեգատների թվային շարքերի հարթեցումներ» նյութում:
Ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են, քանի որ նոր տվյալների ի հայտ գալուն զուգահեռ համապատասխան ամիսների սեզոնայնության գործակիցները փոխվում են: Այդ իսկ պատճառով «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի յուրաքանչյուր տարվա առաջին համարում հրապարակվում են փողի ագրեգատների սեզոնայնորեն հարթեցված նոր շարքերը:


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները




Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի փաստացի և հարթեցված մակարդակնե



Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները




Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ[1,2]

(մլն ՀՀ դրամ)

Ցուցանիշներ	2004	2005		
	Դ[4]	Հ	Փ	Մ
Կենտրոնական բանկի ԶԱԱ	149266	160018	165260	171489
Առևտրային բանկերի ԶԱԱ	55829	56969	53242	50846
Ընդամենը	205095	216987	218502	222334
Կենտրոնական բանկի ԶԱԱ [3]	***150341***	***161160***	***166382***	***172394***



[1] *Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:*

[2] *ԶԱԱ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ԶԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով, առևտրային բանկերի ԶԱԱ-ն փաստացի փոխարժեքներով:*

[3] *Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:*

[4] *Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները:*

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵԿՇԻՌ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 04	Հ - 05	Փ - 05	Մ - 05
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթ)	**-983**	**-1101**	**-943**	**-851**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	331	229	119	160
Արտաքին պարտավորություններ փոխ. արտարժ.	-1314	-1329	-1062	-1010
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով	-	-	-	-
ԶՆԱ	**1373**	**1451**	**1373**	**1280**
Կառավարություն	-107	-103	-102	-99
Զուտ պահանջներ առևտրային բանկերի նկատմամբ	1059	1157	1001	756
Պահանջներ առևտրային բանկերի նկատմամբ	1363	1459	1301	1052
Պարտավորություններ առևտրային բանկերի նկատմամբ	-304	-302	-300	-296
Տնտեսություն	3622	3494	3829	3997
Ձեռնարկություններ	1815	1581	1688	1697
Դրամով	773	557	550	543
Արտարժույթով	1042	1025	1138	1154
Արժեթղթեր	-	-	-	-
Տնային տնտեսություններ	1781	1891	2120	2155
Դրամով	755	709	730	755
Արտարժույթով	1026	1182	1390	1400
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	26	22	21	20
Դրամով	2	2	2	1
Արտարժույթով	24	20	19	18
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	-	-	125
Դրամով	-	-	-	125
Արտարժույթով	-	-	-	-
Այլ ռեզիդենտներ	-	-	-	-
Դրամով	-	-	-	-
Արտարժույթով	-	-	-	-
Զուտ այլ ակտիվներ	-3201	-3097	-3355	-3373
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	-	1	6	7
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժույթ)	-	-	-	-
Արտաքին պարտավոր. (ոչ փոխարկելի արտարժույթ)	-	-	-	-
ՀՀ դրամ դրամարկղում	26	42	35	21
Ներդրումներ փայաբաժիններում	-	-	-	-
Պահանջներ վարկային կազմակերպություններին	-	-	-	-
Այլ ակտիվներ	487	492	469	453
Պարտավորություն. վարկային կազմակ.-ներին	-	-	-	-
Դրամական շուկայի գործիքներ	-	-	-	-
Դրամաշնորհներ	-94	-93	-130	-125
Կապիտալ հաշիվներ	-3106	-3371	-3605	-3545
Այլ պարտավորություններ	-514	-166	-130	-184
ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**390**	**350**	**430**	**430**
Դրամով փոխառություններ	9	-	-	7
Ցպահանջ փոխառություններ	-	-	-	-
Ժամկետային փոխառություններ	9	-	-	7
Արտարժույթով փոխառություններ	382	350	430	423
Ցպահանջ փոխառություններ	-	-	-	-
Ժամկետային փոխառություններ	382	350	430	423

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 04 [3]	Հ - 05	Փ - 05	Մ – 05 [3]
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)				
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1]	**204112**	**215886**	**217559**	**221484**
Զուտ արտաքին ակտիվներ (Կենտրոնական բանկ)	149266	160018	165260	171489
Զուտ արտաքին ակտիվներ (առևտրային բանկեր)	55829	56969	53242	50846
Զուտ արտաքին ակտիվներ (վարկային կազմ.)	-983	-1101	-943	-851
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**80833**	**52896**	**50032**	**56766**
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը	***-17339***	***-38144***	***-40429***	***-35758***
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (Կենտրոնական բանկ)	-36830	-58289	-59057	-59809
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (առևտրային բանկեր)	19598	20248	18730	24151
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (վարկային կազմ.)	-107	-103	-102	-99
Պահանջներ տնտեսությանը	***145787***	***140228***	***140150***	***144776***
Պահանջներ տնտեսությանը (Կենտրոնական բանկ)	43	40	36	32
Պահանջներ տնտեսությանը (առևտրային բանկեր)	142122	136695	136286	140747
Պահանջներ տնտեսությանը (վարկային կազմ.)	3622	3494	3829	3997
Այլ ակտիվներ (զուտ)	***-47615***	***-49188***	***-49690***	***-52252***
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՐԱՑՎԵԼԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**284945**	**268782**	**267591**	**278250**
Ֆինանսական համակարգից դուրս կանխիկ ՀՀ դրամ	98543	82089	84985	91393
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով [2]	33793	32709	35840	37068
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	13060	15501	13995	16714
Արտարժույթով ավանդներ	139159	138133	132340	132645
Վարկային կազմակերպ. ներգրաված փոխառություններ	390	350	430	430
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)				
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1]	**-**	**11774**	**1673**	**3925**
Զուտ արտաքին ակտիվներ (Կենտրոնական բանկ)	-	10752	5242	6229
Զուտ արտաքին ակտիվներ (առևտրային բանկեր)	-	1140	-3727	-2396
Զուտ արտաքին ակտիվներ (վարկային կազմ.)	-	-118	158	92
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	**-27937**	**-2864**	**6734**
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը	**-**	***-20805***	***-2285***	***4671***
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (Կենտրոնական բանկ)	-	-21459	-768	-752
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (առևտրային բանկեր) [2]	-	650	-1517	5420
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (վարկային կազմ.)	-	4	1	3
Պահանջներ տնտեսությանը	**-**	***-5559***	***-78***	***4626***
Պահանջներ տնտեսությանը (Կենտրոնական բանկ)	-	-4	-4	-4
Պահանջներ տնտեսությանը (առևտրային բանկեր)	-	-5427	-409	4462
Պահանջներ տնտեսությանը (վարկային կազմ.)	-	-129	335	168
Այլ ակտիվներ (զուտ)	**-**	***-1573***	***-502***	***-2563***
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՐԱՑՎԵԼԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**-**	**-16163**	**-1191**	**10659**
Ֆինանսական համակարգից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-16454	2895	6409
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով [2]	-	-1084	3132	1227
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	-	2441	-1506	2719
Արտարժույթով ավանդներ	-	-1026	-5793	304
Վարկային կազմակերպ. ներգրաված փոխառություններ	-	-41	80	-1

[1] ԶԱԱ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ԶԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով, իսկ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների ԶԱԱ-ն փաստացի փոխարժեքներով:

[2] Ընդգրկում է ռեզիդենտների՝ դրամով հաշիվները և ցպահանջ ավանդները:

[3] Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

(մլն ԱՄՆ դոլար)


Անվանումը	2004	2005		
	Դ [4]	Հ	Փ	Մ [4]
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)*	547.8	561.9	570.4	579.3
Համախառն միջազգային պահուստներ	575.9	572.1	580.6	589.5
Ոսկի	0	0	0	0
ՀՓԻ ԱՄՀ-ում	12.0	11.7	6.7	6.6
Արտարժույթ [2]	563.9	560.4	574.0	583.0
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)* [3]	550.0	564.3	572.9	581.5

[1] *Հաշվարկված են փաստացի փոխարժեքներով: Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով, հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:*

[2] *Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:*

[3] *Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:*

[4] *Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները: ԱՄՀ-ում ՀՓԻ-ով միջոցները հաշվարկված են հիմք ընդունելով 2004 թ. դեկտեմբերի 31-ին ԱՄՀ կողմից սահմանված 1 ՀՓԻ = 1.5530 ԱՄՆ դոլար փոխարժեքը, որը տարբերվում է տարեվերջի ԿԲ կողմից սահմանված փոխարժեքից:*



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

Ցուցանիշներ	2004[3]	2005		
	Դ	Հ	Փ	Մ
Վարկեր [1]				
Իրավաբանական անձանց				
ՀՀ դրամով	18.8	12.2	20.3	17.8
ԱՄՆ դոլարով	16.9	11.5	14.2	13.9
Ֆիզիկական անձանց				
ՀՀ դրամով	22.0	21.7	21.7	22.0
ԱՄՆ դոլարով	24.3	24.3	24.3	23.8
Ավանդներ [1]				
Իրավաբանական անձանցից				
ՀՀ դրամով	2.8	7.5	8.3	7.3
ԱՄՆ դոլարով	5.3	5.8	3.8	5.6
Ֆիզիկական անձանցից				
ՀՀ դրամով	6.3	7.2	7.3	7.8
ԱՄՆ դոլարով	5.8	6.1	4.7	3.8
ԿԲ ռեպո գործառնությունների տոկոսադրույքը	3.75	4.5	4.5	3.75
ԿԲ-ում ՀՀ բանկերի ավանդների տոկոսադրույքը	1.0	1.75	1.75	1.75
ԿԲ լոմբարդային վարկերի տոկոսադրույքը	16.0	16.0	16.0	16.0
Պետական պարտատոմսերի եկամտաբերությունը [2]	5.6	6.0	4.6	4.6
Գնաճ	2.0	5.4	-0.7	-0.9

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:


[1] Ներկայացված են 91 - 180-օրյա վարկերի և ավանդների միջին կշռված տոկոսադրույքները:


[2] Ներկայացված է միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը:

[3] Ներկայացված են տարվա վերջին ամսվա տոկոսադրույքները: Գնաճը ներկայացված է նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ:

ՀՀ ԴՐԱՄ / ԱՄՆ ԴՈԼԱՐ ՓՈԽԱՐԺԵՔԸ

Ամսաթիվ	Դ - 04	Հ - 05	Փ - 05	Մ - 05
1	500.05	-	477.61	471.00
2	499.19	-	473.16	470.70
3	497.87	-	478.13	470.50
4	-	486.05	474.87	470.25
5	-	486.05	-	470.05
6	493.87	-	-	-
7	487.89	488.75	474.35	-
8	484.89	493.37	474.05	-
9	478.00	-	473.55	470.05
10	478.00	495.01	473.02	469.35
11	-	497.39	474.91	469.35
12	-	499.67	-	-
13	478.00	501.20	-	-
14	483.44	501.80	473.77	469.06
15	483.44	-	473.26	469.06
16	484.34	-	472.61	468.43
17	484.64	500.21	471.61	468.23
18	-	499.45	473.45	467.31
19	-	497.38	-	-
20	484.64	493.43	-	-
21	484.75	488.97	472.68	466.11
22	484.97	-	472.57	464.83
23	483.83	-	472.26	462.77
24	483.92	487.20	471.76	461.60
25	-	484.07	471.22	460.39
26	-	482.34	471.22	-
27	484.37	481.07	-	-
28	485.57	-	471.22	459.20
29	486.23	-	-	457.75
30	485.84	-	-	458.13
31	-	478.48	-	458.13
ժամանակահատվածի վերջ	485.84	478.48	471.22	458.13
ժամանակահատվածի միջին	486.26	491.68	473.39	466.01






ՀՀ ԴՐԱՄ / ԵՎՐՈ ՓՈԽԱՐԺԵՔԸ

Ամսաթիվ	Դ - 04	Հ - 05	Փ - 05	Մ - 05
1	664.82	-	622.56	624.40
2	663.62	-	616.39	622.08
3	662.86	-	624.49	616.40
4	-	661.22	617.38	618.10
5	-	649.65	-	616.47
6	656.85	-	-	-
7	655.48	646.32	614.66	-
8	652.47	651.25	608.87	-
9	635.74	-	604.44	616.47
10	635.98	653.41	603.67	626.39
11	-	651.73	606.79	629.35
12	-	656.72	-	-
13	630.53	658.53	-	-
14	641.43	663.98	609.03	629.29
15	643.80	-	613.68	627.23
16	648.19	-	615.15	626.90
17	649.47	654.82	614.98	626.16
18	-	653.53	617.43	625.17
19	-	649.58	-	-
20	642.83	645.55	-	-
21	648.50	632.53	616.33	618.95
22	649.57	-	616.94	613.53
23	647.56	-	623.05	609.70
24	651.16	631.56	622.86	602.39
25	-	632.44	624.84	597.68
26	-	628.25	624.84	-
27	655.93	625.63	-	-
28	656.83	-	620.36	596.13
29	662.88	-	-	594.25
30	661.13	-	-	592.18
31	-	623.27	-	592.96
ժամանակահատվածի վերջ	661.13	623.27	620.36	592.96
ժամանակահատվածի միջին	650.80	645.79	616.13	614.64



ՀՀ ԴՐԱՄ / ՌԴ ՌՈՒԲԼԻ ՓՈԽԱՐԺԵՔԸ

Ամսաթիվ	Դ - 04	Հ - 05	Փ - 04	Մ - 05
1	17.76	-	17.01	17.00
2	17.82	-	16.92	16.99
3	17.78	-	17.10	16.99
4	-	17.52	16.95	16.96
5	-	17.52	-	16.94
6	17.68	-	-	-
7	17.52	17.61	16.95	-
8	17.40	17.78	16.86	-
9	17.09	-	16.80	16.99
10	17.05	17.84	16.81	17.03
11	-	17.92	16.91	17.09
12	-	17.87	-	-
13	17.00	17.98	-	-
14	17.19	18.01	16.88	17.08
15	17.27	-	16.88	17.07
16	17.35	-	16.87	17.04
17	17.41	17.90	16.84	17.03
18	-	17.86	16.91	17.02
19	-	17.69	-	-
20	16.99	17.52	-	-
21	17.38	17.36	16.92	16.96
22	17.39	-	16.92	16.91
23	17.38	-	16.97	16.78
24	17.39	17.30	16.95	16.70
25	-	17.28	16.98	16.62
26	-	17.24	16.98	-
27	17.41	17.12	-	-
28	17.48	-	16.97	16.57
29	17.51	-	-	16.45
30	17.51	-	-	16.46
31	-	17.09	-	16.46
ժամանակահատվածի վերջ	17.51	17.09	16.97	16.46
ժամանակահատվածի միջին	17.40	17.60	16.92	16.87



ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ [1]

ժամկետ		3 – 6 ամիս[2] (ներառյալ 181-օրյա)					
		Տեղաբաշխման ծավալը (մլն ՀՀ դրամ)	Միջին անվ. եկամտաբ. (%)	Նվազագույն տոկոսադրույքը	Առավելագույն տոկոսադրույքը	Ստանդարտ շեղումը	Իրական եկամտաբ.[3]
2002	Հունվար	500.0	14.7	14.7	14.7	0.0	19.3
	Ապրիլ	700.0	13.6	13.6	13.6	0.0	10.0
2005	Հունվար	1500.0	4.3	4.3	4.3	0.0	11.1
	Փետրվար	1000.0	4.2	4.2	4.2	0.0	9.8
	Մարտ	-	-	-	-	-	-

ժամկետ		6 - 9 ամիս[2] (ներառյալ 181-օրյա)					
		Տեղաբաշխման ծավալը (մլն ՀՀ դրամ)	Միջին անվ. եկամտաբ. (%)	Նվազագույն տոկոսադրույքը	Առավելագույն տոկոսադրույքը	Ստանդարտ շեղումը	Իրական եկամտաբ.[3]
2003	Հունվար	600.0	14.9	14.9	14.9	0.0	22.4
	Փետրվար	1100.0	12.7	12.2	13.3	0.8	18.8
	Մայիս	600.0	14.0	14.0	14.0	0.0	10.3
	Օգոստոս	700.0	10.3	10.3	10.3	0.0	-3.6
2005	Մարտ	2500.0	3.74	3.68	3.83	0.1	5.5

ժամկետ		9 – 12 ամիս[2] (ներառյալ 364-օրյա)					
